ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ե 40/11-7058
«12» 12 2024 թ.

ՀՀ, ք. Երևան, 0061, Արշակունյաց 63
Հեռ.՝ (+ 374 10) 44-34-80, (+ 374 60) 37-26-56
Հեռ.՝ (+ 374 10) 44-29-04, (+ 374 60) 37-77-37

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝
ԱՐԱՅԻԿ ԵՍԱՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Եսայան,

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության (Այսուհետև՝ ՔԿ ծառայություն) կարիքների համար 2024թ.-ի ընթացքում ապրանքների ձեռքբերման նպատակով, էլեկտրոնային աճուրդի ձևով՝ 01.11.2023թ.-ին հայտարարվել է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/4» ծածկագրով գնման ընթացակարգ, որի հաղթող մասնակից է ճանաչվել նաև «Մ.Ա.ԿԻՐԱԿՈՍՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ն, և 08.12.2023թ.-ին կնքվել է ապրանքների մատակարարման «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/4-7» ծածկագրով պայմանագիրը: Սակայն, հետագայում պարզվել է, որ պայմանագրի կատարման ընթացքում Վաճառողի կողմից թույլ են տրվել պայմանագրի պարտադիր պայմանների խախտումներ, որոնք հանգեցրել են պայմանագրի միակողմանի մասնակի լուծմանը՝ 3.389.995 ՀՀ դրամ գումարի չափով, ուստի համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 1-ին մասի, 6-րդ կետի ա/ ենթակետի և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 2-րդ մասի պահանջներով՝ պատվիրատուի ղեկավարը՝ 12.12.2024թ.-ին, որոշում է կայացրել «Մ.Ա.ԿԻՐԱԿՈՍՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Սահմանված կարգի համաձայն, ներկայացնում եմ պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման պատճեն՝ «Մ.Ա.ԿԻՐԱԿՈՍՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Առդիր՝ « 2 » թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ՏԻԳՐԱՆ ԻԳԻԹՅԱՆ**

Կատարող՝ Նելլի Աբովյան
ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայություն, ՆՏԱ բաժին
Հեռ. (060) 371-861

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

«12» դեկտեմբերի 2024թ. **N 25-Ա**

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/4-7» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑ «Մ.Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության (այսուհետ՝ ՀՀ ԱՆ ՔԿ ծառայություն) և «Մ.Ա.ԿԻՐԱԿՈՍՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 08.12.2023թ.-ին՝ կնքվել է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/4-7» ծածկագրով գնման պայմանագիր (Այսուհետև՝ Պայմանագիր)՝ «ՀՀ ԱՆ ՔԿ ծառայության կարիքների համար ապրանքներ մատակարարելու վերաբերյալ», որի ընդհանուր գումարը կազմել է 7.006.800 ՀՀ դրամ: Պայմանագրի կատարման ընթացքում Կատարողի կողմից թույլ են տրվել պայմանագրի պարտադիր պայմանների խախտումներ, մասնավորապես.

Ըստ պայմանագրի, «Մ.Ա.ԿԻՐԱԿՈՍՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ն պարտավորվել է, մինչև 2024թ.-ի հունիսի 30-ը, մատակարարել 3500կգ տնտեսական օճառ ապրանքը, սակայն չի մատակարարել:

12.09.2024թ.-ին թիվ Ե-40/11-5231 գրությամբ «Մ.Ա.ԿԻՐԱԿՈՍՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ին տեղեկացվել է առ այն, որ վերը նշված ապրանքը ՀՀ ԱՆ ՔԿ ծառայությանն անհրաժեշտ է պայմանագրով սահմանված ժամկետներում և առաջարկվել է սեղմ ժամկետում՝ տալ պարզաբանում և մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքը, սակայն «Մ.Ա.ԿԻՐԱԿՈՍՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ի կողմից ուղարկված գրությանն արձագանք չի տրվել, ինչպես նաև չեն պատասխանել մեր հեռախոսազանգերին: Արդյունքում՝ «Մ.Ա.ԿԻՐԱԿՈՍՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ի կողմից թույլ է տրվել պայմանագրային պարտավորությունների խախտում՝ խախտվել է ապրանքների մատակարարման ժամանակացույցը, ուստի ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը՝ ՀՀ ԱՆ ՔԿ ծառայությունը **2024թ.-ի նոյեմբերի 26-ին, միակողմանի մասնակի լուծվել է ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության և «Մ.Ա.ԿԻՐԱԿՈՍՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ի միջև 08.12.2023թ.-ին կնքված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/4-7» ծածկագրով պայմանագիրը՝**

3.389.995 (երեք միլիոն երեք հարյուր ութսունինը հազար ինը հարյուր իննսունիինգ) ՀՀ դրամի չափով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Մ.Ա.ԿԻՐԱԿՈՍՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ն, սահմանված ժամկետում չի վճարել որակավորման և պայմանագրի ապահովման գումարներն, ուստի համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 1-ին մասի, 6-րդ կետի ա/ ենթակետի՝ «Մ.Ա.ԿԻՐԱԿՈՍՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ին պետք է ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 2-րդ մասի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/4-7» ծածկագրով միակողմանի մասնակի լուծված պայմանագրի Կատարող՝ «Մ.Ա.ԿԻՐԱԿՈՍՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ին, ներառել գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ստորև ներկայացվում է համապատասխան տեղեկատվությունն աղյուսակի տեսքով:

Մասնակցի				
Անվանումը	ՀՎՀՀ	Գործունեության հասցեն	Կնքված պայմանագրի միակողմանի լուծման իրավական հիմքը	Գնման ընթացակարգի ծածկագիրը
«Մ.Ա.ԿԻՐԱԿՈՍՅԱՆՆԵՐ» ՍՊԸ	02890282	**ՀՀ ք. Երևան, Դեղատան փողոց, 10 շենք, 6 բնակարան**	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 1-ին մասի, 6-րդ կետի ա/ ենթակետ. **Խախտել է պայմանագրով նախատեսված ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը և մասնակիցը սահմանված ժամկետում չի վճարել պայմանագրի և որակավորման ապահովման գումարը:**	«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/4-7»

ՏԻԳՐԱՆ ԻԳԻԹՅԱՆ